

կրող: Ուլուկնք-ուլուկնք փորուած, ասեղնագործուած էր այդ երեսը, բնական դաժանութիւնը տասնապատկելով իբր տգեղութիւնը: Ծաղկախտը ահաւոր եղած էր աւերին մէջ: Զարհուրելի թաթա՛րը: Որ նախակիր ձեւով մը կը մարմնաւորէր իթթիհատեան ոգին, ազգային ալ քլիշէ բարբարոսութիւնը (բռնութիւն, ծեծ, հայհոյանք, կինե-րու հալածում, կրօնքին ու գիրքին հասցէին լեզուագար հեշտախօսութիւն) իբր թէ այպանելով, վարուելով գեղացիներուն հետ մեղմ, գրեթէ թաքթով, արդարութեամբ, բարեկրթութեամբ, երբ վճարէին, այլապէս դառնալով հին թուրքը փնտուել տուող սառնասիրտ գազանութեան, երբ «պարտականութեան գերի», դողահար, ատամները կճրր-տելէն ու եօթը անգամ թուրք, կը մտնէր աղքատին տու-նը, այսինքն՝ ախոռը - քանի որ խսիրէն ու այծու մազէ ծածկոցէ մը զատ ոչինչ ունէր հոն գտնելիք - իր ձեռքովը կը քակէր պարտականին ալ սատկելու վրայ - որովհետեւ անօթի էջը, ոսկոր կառոյց կովիկը (ձմեռները այս խստու-թիւնը կը հասնէր ծայրակէտին, երբ ձիւնը կ'արգիլէր անոնց թափառումը դուրսերը) ու քառասուն փարայի (ո՛վ իմ ականջները, ինչեր չէք լսած) հարէ մեզաք կը ծախէր սրճարանին առջեւ միշտ ագռաւներու պէս դիակ հոտո-տող փոմաք գաղթականներուն, որոնք կեա՛վուրին ապ-րանքը կը կրէին իրենց հիւղակներուն, օրհնելով փատի-շահը եւ անոր փոխանորդ Վասֆի էֆէնտին կտրուկ բազուկ կը մաղթէին: Ընդգիմութի՞ւն: 1896էն յետոյ հար-կահաւաքը պետական շատ կարեւոր անձնաւորութիւն մըն էր: Անոր դէմ ցոյց մը հաւասար՝ պետութեան դէմ ըմբոստութեան մը: Հաւաքաբար պատժելու դրութիւնը ատկէ կ'առնէ սկիզբ: Հարկահաւաքը առանձին չէր ան-շուշտ: Անոր ընկերացող ոստիկանները վար չէին մնար թաթար Վասֆիէն զարհուրանքը հագնելու, ոգեւորելու կերպերուն մէջ լայնօրէն հաւատարիմ, մագիստրոս ի-րենց աւանդութեանց, ըլլալով ընտրուած լեռներու ամէ-նէն հասակաւոր, դառնադէմ, ծաղկաւեր գազաններէն, անոնցմէ, որոնք քաղաքներու մէջ վայրենութիւն մը կը